

ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ (ՀՀ ՎՊԽ) ՆԻՍՏԵՐ

27.01.2015թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ.Անանյանը, Գ.Գևորգյանը, Ա.Սաֆյանը, Վ.Դավթյանը, Յու. Պողոսյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար՝ Հ. Գրիգորյանը.

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ.Միրզոյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ.Սարոյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տրանսպորտի և կապի վիճակագրության բաժնի պետ Գ. Թորոսյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի պետ

Վ. Արևշատյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժնի պետ

Ա. Հարությունյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Հ. Բաբայանը:

Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.

1. «Լարային ռադիոհեռարձակման մասին» ձև 57-կապ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը, ինչպես նաև «ՀՀ ՎՊԽ 2014 թվականի ապրիլի 7-ի թիվ 13-Ն որոշումը» հարցը:

/Զեկուցող՝ Գ.Թորոսյան /

Որոշեցին՝

Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2014 թվականի ապրիլի 7-ի «Լարային ռադիոհեռարձակման մասին» Ձև թիվ 57-կապ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2003 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 35-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 13-Ն որոշումը:

/Նորմատիվ/

2. «2014 թվականի չորրորդ եռամսյակում ՀՀ ԱՎԾ որակի կառավարման աշխատանքային խմբի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը ՀՀ վիճակագրության պետական խորհրդի կողմից ի գիտություն ընդունելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Վ.Արևշատյան /

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն «2014 թվականի չորրորդ եռամսյակում ՀՀ ԱՎԾ որակի կառավարման աշխատանքային խմբի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը»:

/Անհատական/

3. Հաղորդում՝ Ղազախստանի Հանրապետություն Ալմաթի քաղաքում 2014 թվականի դեկտեմբերի 8-ից 12-ը Միավորված ազգերի առևտրի և զարգացման կոնֆերանսի (UNCTAD), Միավորված ազգերի կազմակերպության Ասիայի և Խաղաղ օվկիանոսի տնտեսական և սոցիալական հանձնաժողովի (ESCAP) հետ համատեղ կազմակերպված «Տեղեկատվական տնտեսության վիճակագրություն» խորագրով ուսուցողական դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Ա. Հարությունյան, Ն. Բաբայան /

4. Հաղորդում՝ Բելառուսի Հանրապետություն Մինսկ քաղաքում 2014 թվականի դեկտեմբերի 11-ից 12-ը ԱՊՀ վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի 52-րդ նիստին և «ԱՊՀ տարածաշրջանում աշխատանքի վիճակագրության զարգացումը. տեղեկատվության փոխանակման խնդիրները և հեռանկարները» խորագրով խորհրդակցությանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Լ. Միրզոյան, Լ.Քալանթարյան /

13.02.2015թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ. Անանյանը, Գ.Գևորգյանը, Ա.Սաֆյանը, Յու.Պողոսյանը, Վ.Դավթյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ.Գրիգորյանը.

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ.Սարոյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ.Սարտիրոսովան,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տրանսպորտի և կապի վիճակագրության բաժնի պետ Գ.Թորոսյանը,

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի արդյունաբերության վիճակագրության բաժնի պետ Ա. Անանյանը:

Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.

1. «ՀՀ ՎՊԽ 2012 թվականի հուլիսի 9-ի թիվ 17-ն և թիվ 19-ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու» և «Ընդհանուր օգտագործման օդային տրանսպորտի աշխատանքի մասին» ձև 1-ավիա (ամսական) և «Ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի աշխատանքի մասին» ձև 2-երկաթ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերն ու դրանց լրացման հրահանգները հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Գ.Թորոսյան/

Որոշեցին՝

Հաստատել «Ընդհանուր օգտագործման օդային տրանսպորտի աշխատանքի մասին» ձև 1-ավիա (ամսական) և «Ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի աշխատանքի մասին» ձև 2-երկաթ (ամսական) պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերն ու դրանց լրացման հրահանգները» և ուժը կորցրած ճանաչել «ՀՀ ՎՊԽ 2012 թվականի հուլիսի 9-ի թիվ 17-ն և թիվ 19-ն որոշումները»:

/Նորմատիվ/

2. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 1998/99 և 2001 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության անվանագերծված տվյալների բազաները Վաշինգտոնի համալսարանին կից առողջության ցուցանիշների և գնահատման ինստիտուտի տվյալների զարգացման մենեջեր Մեյոյու Իզրաելսոնին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Դ.Մարտիրոսովա/

Որոշեցին՝

Թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ Վաշինգտոնի համալսարանին կից առողջության ցուցանիշների և գնահատման ինստիտուտի տվյալների զարգացման մենեջեր Մեյոյու Իզրաելսոնին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 1998/99 և 2001 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազաները՝ գուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

/Անհատական/

3. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2013 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության անվանագերծված տվյալների բազան Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Դ.Մարտիրոսովա/

Որոշեցին՝

Թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2013 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազան՝ գուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

/Անհատական/

4. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2013-2014 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության անվանազերծված տվյալների բազաները ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի Երևանյան գրասենյակին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Դ.Մարտիրոսովա/

Որոշեցին՝

Թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի Երևանյան գրասենյակին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2013 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազաները՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

/Անհատական/

5. ՀՀ ՎՊԽ 2011 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 04-Ն և թիվ 05-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու և «Հաշվետվություն կազմակերպության արդյունաբերական արտադրանքի մասին» Ձև 1-արտ (ամսական), «Հաշվետվություն կազմակերպության արդյունաբերական արտադրանքի մասին» Ձև 1-արտ (փոքր) (եռամսյակային) և «Հաշվետվություն կազմակերպության արդյունաբերական արտադրանքի մասին» Ձև 1-արտ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերն և դրանց լրացման մեթոդական ցուցումները հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Անանյան /

Որոշեցին՝

Հաստատել «Հաշվետվություն կազմակերպության արդյունաբերական արտադրանքի մասին» Ձև 1-արտ (ամսական), «Հաշվետվություն կազմակերպության արդյունաբերական արտադրանքի մասին» Ձև 1-արտ (փոքր) (եռամսյակային) և «Հաշվետվություն կազմակերպության արդյունաբերական արտադրանքի մասին» Ձև 1-արտ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերն և դրանց լրացման մեթոդական ցուցումները համաձայն հավելվածների և ուժը կորցրած ճանաչել «ՀՀ ՎՊԽ 2011 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 04-Ն և թիվ 05-Ն որոշումները»:

/Նորմատիվ/

6. «Հանքային ջրերի արդյունահանման և օգտագործման մասին» Ձև 1-հանքջուր (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ն. Բաղդասարյան/

Որոշեցին՝

Հաստատել՝ «Հանքային ջրերի արդյունահանման և օգտագործման մասին» Ձև 1-հանքջուր (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևը՝ համաձայն հավելված 1-ի:

Հաստատել՝ «Հանքային ջրերի արդյունահանման և օգտագործման մասին» Ձև 1-հանքջուր (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության լրացման հրահանգը՝ համաձայն հավելված 2-ի:

/Նորմատիվ/

7. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի 2014 թվականի հաշվեկշիռները հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Հայրապետյան/

Որոշեցին՝

Հաստատել «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի 2014 թվականի հաշվեկշիռներն ըստ ներկայացված ծրագրերի:

/Անհատական/

8. Հաղորդում Հունգարիայի Բուդապեշտ քաղաքում 2015 թվականի փետրվարի 4-ից 5-ը տեղի ունեցած «Գյուղատնտեսական և գյուղական վիճակագրության կատարելագործման գլոբալ ռազմավարություն» ծրագրի և «Երկրի գյուղատնտեսական և գյուղական վիճակագրության գնահատում» հարցաթերթի նախագծի քննարկման նպատակով ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից կազմակերպված խորհրդակցությանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Ս.Մնացականյան, Ա.Ավագյան/

23.02.2015թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ. Անանյանը, Գ.Գևորգյանը, Ա.Սաֆյանը, Յու.Պողոսյանը, Վ.Դավթյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ.Գրիգորյանը.

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը,
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ.Սարոյանը:

Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.

1. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության նախարարության 2000 թվականի մարտի 26-ի «Բիզնես-ռեգիստրի տվյալների մասով տեղեկանք-հարցաթերթը և դրա լրացման հրահանգը հաստատելու մասին» N 25 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Վ.Սարոյան/

Որոշեցին՝

Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության նախարարության 2000 թվականի մարտի 26-ի «Բիզնես-ռեգիստրի տվյալների մասով տեղեկանք-հարցաթերթը և դրա լրացման հրահանգը հաստատելու մասին» N 25 հրամանը:

/Նորմատիվ/